ԱՐԱՄՈՒՍ ԱՄՐՈՑԻ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավետիսյան Հ. (ԵՊՀ, Հայաստան)
hykavetisyan@yahoo.com

Բանալի բառեր՝ Արամուս, ՈՒրարտու, ամրոց, միջնաբերդ, հուշարձան, շերտագրություն:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս գյուղը և շրջակայքն աչքի են ընկնում հնագիտական ու պատմաճարտարապետական հուշարձաններով: Մեծաքանակ համալիրները վերաբերվում են քարի դարից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Դրանց մեջ առանձնանում է հատկապես Արամուս գյուղի տարածքի հսկայական ամրոց-բնակավայրը, որի պեղումները սկսվել են դեռևս 1980-ական թվականներին, Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավախմբի ջանքերով: Սպիտակի երկրաշարժի և ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով հուշարձանի տարածքում կատարվող պեղումները ժամանակավորապես դադարեցին:

Կանոնավոր պեղումները շարունակվեցին 2004 թվականից ամրոցի արևելյան ծայրամասի հյուսիսային հատվածում: Մինչ I դարավանդը առանձնացվեց պեղման հրապարակ՝ շուրջ 250 քմ մակերեսով:

Շարունակելով պեղումները՝ արշավախումբը նպատակ ուներ ճշտելու ամրոցի կառուցապատման փուլերը, հստակեցնելու ժամանակագրական խնդիրները, շերտագրական իրողությունները և այլն: Այս պրոբլեմների պարզաբանման համար պեղավայրն ընդարձակվեց հիմնականում միջնաբերդի հյուսիս-արևելյան ուղղությամբ: Պեղման աշխատանքների ընթացքում ուսումնասիրվող տարածքը ընդարձակվեց: Մաքրվեց միջնաբերդի արևելյան մուտքին կից կառուցված հյուսիսային աշտարակը, առաջին պարսպապատը:

Համարյա ամբողջովին պեղվեցին միջնաբերդի չորս շինությունները: Որոշակի հստակություն արձանագրվեց պարսպապատերի հետազոտման ժամանակ: Հատկապես կարևոր է դարավանդի վրա կատարված, բացվածքում հայտնաբերված պարիսպի մնացորդը: Ամենայն հավանականությամբ այս պարսպապատը վերաբերվում է մինչուրարտական ժամանակաշրջանին և բնորոշվում է որպես կիկլոպյան ամրոցի մնացորդ՝ բնակեցված բրոնզե դարից:

Նշված պարիսպից դեպի հարավ դարավանդի վրա բացվել է հաջորդ պարսպագիծը: Վերջինս վերաբերում է Վանի թագավորության ժամանակաշրջանին և միջնաբերդի արևելյան հատվածում միանում է հզոր աշտարակի մնացորդներին:

Այս պարսպապատը, իր կառուցողական առանձնահատկությամբ, կրկնում է Վանի թագավորության նմանօրինակ շինությունները: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ միջնաբերդն օղակող վերջին պարսպագիծը, անկասկած, հետուրարտական ժամանակաշրջանի համակարգ է, որը գոյատևել է նաև վաղ միջնադարում: Բացի ամրաշինական դիաքրոն կառույցներից միջնաբերդում պեղվեցին նաև տարբեր շինություններ:

Այսպիսով, Արամուսի ամրոցն ունի ժամանակագրական երեք հիմնական փուլ՝ մինչուրարտական, ուրարտական, հետուրարտական: Այս փուլերը ներկայացված են համապատասխան շերտագրական և շինարարական հորիզոններով:

THE LAYER GRAPH OF ARAMUS CASTLE

Avetisyan H. (Yerevan State University, Armenia)